ABC | DOMAIN

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ 1883 | ք.Երևան «15».03 2018թ.

Ծառայությունների վճարովի մատուցման

**«ԷյԲիՍիԴոմեն» ՍՊԸ-ն, այսուհետ՝ Կատարող, ի դեմս ընկերության Տնօրեն՝ Գրիգորի Սաղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և ՀՀ մշակույթի նախարարություն հետագայում՝ «Պատվիրատու», ի դեմ Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Մուրադյանի,** մյուս կողմից, կնքեցին սույն պատվերը հետևյալի մասին.

1. **Սույնով Պատվիրատուն պատվիրում է, իսկ Կատարողը** պարտավորվում է մատուցել Ծառայություններ սույն Պատվերով և **դրա անբաժան մասը կազմող այլ փաստաթղթերով** սահմանված կարգով, իսկ Պատվիրատուն պարտավոր է ընդունել **Ծառայությունները և վճարել դրա համար** սույն Պատվերով և դրա անբաժան մասը կազմող փաստաթղթերով սահմանված կարգով
2. Յուրաքանչյուր Ծառայության գինը, վճարման կարգը և ժամկետները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները Ծառայության մատուցման կասեցման, Համեղված(ներ)ի լուծման կարգը, Կողմերի պատասխանատվությունը և Կողմերի հարաբերությունները կարգավորող այլ դրույթները նախատեսված են ԸԴՊ-ում, կոնկրետ Ծառայության Հատուկ Պայմաններում Գնացուցակում, Հավելված(ներ)ում և Կողմերի կողմից ստորագրված և Պայմանագրի անբաժանելի մասը կազմող այլ փաստաթղթ(եր)ում, որոնք բոլորը միասին կազմում են ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):
3. Սույն Պատվերը ստորագրվում է անորոշ ժամկետով:
4. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:
5. Սույն Պայմանագրի անվանումը, նրա հավելվածների, մասերի և հոդվածների անվանումները դրված են միայն հարմարության համար և չպետք է ազդեն Պայմանագրի կատարման և մեկնաբանման վրա:
6. Սույն Պատվերում տերմիններն / եզրույթներն ունեն նույն նշանակությունը ինչ ԸԴՊ-ում:
7. Սույն Պատվերը ստորագրվում է հայերեն լեզվով երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
8. Կողմերի հասցեներն ու բանկային վավերապայմանները՝

| Կատարող՝ «ԷյԲիՍիԴոմեն» ՍՊԸ | Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն |
|---|---|
| Իրավաբանական հասցե՝ ք.Երևան, Մաշտոց 51 | Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2 |
| Գործունեության հասցե՝ Երևան, Հր. Քոչար 4 , 2-րդ հարկ | Գործունեության հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2 |
| Հեռախոս՝ +374 60 27 00 27 | Հեռախոս՝ 011 58-61-78 |
| Էլ. փոստ՝ info@internet.am | Էլ. փոստ՝ cultproject@mail.ru |
| Հ/հ՝ 1570020918560100 «Ամերիաբանկ» ՓԲԸ | Հ/հ՝ 900011018729 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում |
| ՀՎՀՀ՝ 01561302 | ՀՎՀՀ՝ 02508054 |
| Տնօրեն՝ Գրիգորի Սաղյան | Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Մուրադյան |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) Կ.Տ. |

*Այս Պատվերը ստորագրելով՝ Պատվիրատուն հավաստում է, որ կարդացել և ամբողջությամբ ընդունում է սույն Պատվերը, վերջինիս անբաժանելի մասը կազմող Հավելվածը (եթե այդպիսին կիրառելի է), Կատարողի կայքում (www.abcdomain.am) ներկայացված Ընդհանուր Դրույթներ և Պայմանները, Հատուկ Պայմանները, Գնացուցակը, որոնք բոլորը միասին կազմում են Պայմանագիրը:*

ABC DOMAIN

ՊԱՅՄԱՆ ԹԻՎ 1883 առ 15.03.18թ.-ի

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ SSL-4

ք.Երևան «15» 03 2018թ.

**Էսէսէլ (SSL) սերտիֆիկատ ստանալու համար կոդի տրամադրում**

«ԷյԲիՄիԴոմեն» ՍՊԸ-ն, այսուհետ՝ Կատարող, ի դեմս ընկերության Տնօրեն՝ Գրիգորի Սաղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և ՀՀ մշակույթի նախարարության հետագայում՝ «Պատվիրատու», ի դեմս Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Սարգսյանի, մյուս կողմից, կնքեցին սույն հավելվածը հետևյալի մասին.

1. Ծառայությունը՝
1.1 **Positive SSL Wildcard Էսէսէլ (SSL) սերտիֆիկատ ստանալու համար կոդի տրամադրում՝ ըստ փաստաթղթի micult.am դոմենի համար:**
2. Ծառայության գինը՝
2.1 Էսէսէլ (SSL) սերտիֆիկատ ստանալու համար կոդի ձեռքբերման տարեկան գինը կազմում է ***69000 (վաթսունինը հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ բոլոր կիրառվելիք հարկերը:***
3. Վճարման ժամկետը և կարգը:
3.1 Սույն Հավելվածի երկկողմանի ստորագրման պահից 5 (հինգ) օրվա ընթացքում Պատվիրատուն պարտավոր է վճարել 2.1. կետում նախատեսված Ծառայության գինը: Ծառայության դիմաց Պատվիրատուի կողմից կատարված յուրաքանչյուր վճարին համապատասխան Կատարողը Պատվիրատուին տրամադրում է հարկային հաշիվ վճարման պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:
4. Սույն Հավելվածը ստորագրվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմը ստանում է մեկական օրինակ:
5. Սույն Հավելվածում տերմինները / եզրույթները ունեն նույն նշանակությունը ինչ ԸԴՊ-ում:

6. Կողմերի հասցեները ու բանկային վավերապայմանները՝

Կատարող՝ «ԷյԲիՄիԴոմեն» ՍՊԸ
Իրավաբանական հասցե՝ ք.Երևան, Մաշտոց 51
Գործունեության հասցե՝ Երևան, Հր. Քոչար 4, 2-րդ հարկ
Հեռախոս՝ +374 60 27 00 27
Էլ. փոստ՝ info@internet.am
Հ/հ՝ 1570020918560100 «Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 01561302

Տնօրեն՝ Գրիգորի Սաղյան

_______________________
(ստորագրություն)
Կ.Տ.

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն
Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2
Գործունեության հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2
Հեռախոս՝ 011 58-51-78
Էլ. փոստ՝ cultproject@mail.ru
Հ/հ՝ 900011018729 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում
ՀՎՀՀ՝ 02508054

Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Սարգսյան

_______________________
(ստորագրություն)
Կ.Տ.

*Այս Պայմանը ստորագրելով՝ Պատվիրատուն հաստատում է, որ կարդացել և ամբողջությամբ ընդունում է սույն Պայմանը, վերջինիս անբաժանելի մասը կազմող Հավելվածը (եթե այդպիսին կիրառելի է), Կատարողի կայքում (www.abcdomain.am) ներկայացված Ընդհանուր Դրույթներ և Պայմանները, Հատուկ Պայմանները, Գնացուցակը, որոնք բոլորը միասին կազմում են Պայմանագիրը:*